ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայի նախագահ

ՀՈԳԵՒՈՐԻ ՈՒ ԳԻՏԱԿԱՆԻ ՀԱՄԱԴՐՄԱՄԲ

Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնումը, թելադրուած լինելով հոգեւորականների նոր սերնդի պատրաստման մտահոգութեամբ, միաժամանակ անգնահատելի նշանակութիւն ունեցաւ Հայաստանում հայագիտութեան եւ ընդհանրապէս գիտութեան զարգացման գործում, որին նպաստեց երկու կարեւոր հանգամանք. հրաւիրուած դասախօսները եւ դասաւանդուող առարկաները, որոնք ընդգրկեցին գիտութեան եւ մշակոյթի լայն շրջանակ. աստուածաբանութեան, կրօնագիտութեան, եկեղեցագիտութեան կողքին՝ աւանդական հայագիտական առարկաները, հոգեւոր մշակոյթն ու երաժշտութիւնը, ինչպէս նաեւ բնագիտական մի շարք առարկաներ, որոնք կապւում էին տիեզերքի եւ արարչագործութեան հետ:

Նման մօտեցումը հնարաւորութիւն տուեց Ճեմարանի սաներին ունենալ գիտելիքների լայն շրջանակ, շփուել տարբեր գիտակարգերի ժամանակի նոր մեթոդներին, ակադեմիական դպրոցներին եւ ուղղութիւններին:

Դասաւանդման նման եղանակն իր հերթին հնարաւոր եղաւ իրականացնել Ճեմարանի տեսչական եւ դասախօսական կազմի ճանաչուած հոգեւորականների եւ գիտնականների շնորհիւ: ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին Գէորգեան ճեմարանում դասաւանդել են հայագիտութեան գրեթէ բոլոր առաջնակարգ մեծութիւնները, հմուտ հայագէտներ եւ աստուածաբաններ՝ Մաղաքիա արք. Օրմանեանը, Կարապետ եպս. Տէր-Մկրտչեանը, Գարեգին եպս. (ապա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս) Յովսէփեանը, Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեանը (Մեսրոպ Մագիստրոս), ականաւոր հայագէտներ՝ Մանուկ Աբեղեանը, Հրաչեայ Աճառեանը, Յակոբ Մանանդեանը, Ստեփան Լիսիցեանը, երաժշտութեան բնագաւառում՝ Քրիստափոր Կարայ-Մուրզան եւ Կոմիտաս Վարդապետը, նկարիչ Եղիշէ Թադեւոսեանը եւ բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը:

Ճեմարանն իր հերթին գիտական դարբնոց դարձաւ այստեղ ուսանած Նիկողայոս Ադոնցի, Նիկոլ Ադբալեանի, Թադէոս Ադալբէգեանի, Ստեփանոս Մալխասեանցի, Արսէն Տէրտէրեանի եւ ուրիշ շատ-շատերի համար, ովքեր այնուհետեւ դառնալու էին Երեւանի պետական համալսարանի եւ ապա Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի հիմնադիր անդամները: Անկախ ժամանակի հարկադրական սահմանափակումներից՝ նրանք հպարտութեամբ կրեցին ճեմարանաւարտի տիտղոսը:

Շնորհիւ այս ժամանակահատուածի Հայոց հայրապետների նախանձախնդրութեան եւ հոգածութեան՝ շատ ճեմարանականներ իրենց ուսումն այնուհետեւ շարունակեցին Ռուսաստանի ու Եւրոպայի համալսարաններում ու ակադեմիական կենտրոններում, ապա վերադարձան հարազատ հաստատութիւն՝ այնտեղ դասաւանդելու համար: Ի. դարասկզբին Ճեմարանն իրաւացիօրէն անուանւում էր Հայկական ակադեմիայ՝ այնտեղ պաշտպանուող աւարտաճառերով եւ իրականացուող ուսումնասիրութիւններով:

Ոչ միայն Հայոց Եկեղեցու կեանքում, այլեւ հայագիտութեան բնագաւառում Ճեմարանն իր առաքելութիւնը շարունակեց 1945 թ. վերաբացուելուց յետոյ: Այստեղ սկսեցին դասաւանդուել եւ ուսումնասիրուել հայոց հոգեւոր մշակոյթի ու եկեղեցական մատենագրութեան հետ կապուած այնպիսի գիտակարգեր, որոնք ժամանակի բերումով հնարաւոր չէր իրականացնել միւս գիտական-ուսումնական հաստատութիւններում:

Անկախութեան շրջանում ճեմարանական նոր սերնդին վիճակուեց մեր ժողովրդի կեանքում հոգեւոր աւանդների վերահաստատման դժուարին ու կարեւոր գործը, որի կողքին շարունակեց առաջնային մնալ անցեալի կրօնա-եկեղեցական ժառանգութեան ուսումնասիրումը:

Գիտական հաստատութիւնների ու Ճեմարանի գործակցութիւնը շարունակւում է նաեւ այսօր: Ճեմարանում դասաւանդում են մեր ճանաչուած գիտնականները, եւ հանրապետութեան գիտական կեանքին իրենց մասնակցութիւնն են բերում ճեմարանականներն ու ճեմարանաւարտ սաները:

Գէորգեան հոգեւոր ճեմարանին մաղթենք բազում տասնամեակների արգասաբեր գործունէութիւն՝ յանուն մեր Եկեղեցու պայծառութեան, հոգեւոր սպասաւորների պատրաստութեան, բարոյական արժէքները մեր կեանքում արմատաւորելու, ինչպէս նաեւ գիտութեան բնագաւառում գործակցելու եւ ժամանակի բարոյա-աշխարհայեացքային տարբեր մարտահրաւէրներին համատեղ դիմագրաւելու համար: